# ԲՈՒԼԻՆԳ

| | |
|---|---|
|  | Սա իմ եղբայր Արամն է: Նա հրաշալի տղա է: |
| | Եղբորս դպրոցում հալածում են, և նա շատ է վախենում իրեն հալածողներից: |
| | Անցյալ շաբաթ մեր դպրոցի տնօրենը ելույթ ունեցավ բուլինգի մասին: Ես չէի հասկանում, թե ինչ է բուլինգը, ուստի հարցուփորձ արեցի ուսուցչիս: |
| | Ուսուցիչս ասաց, որ բուլինգի ենթարկողը՝ հալածողը նա է, ով փորձում է ինչ-որ մեկին վիրավորել և ստիպել նրան վատ զգալ իրեն: |

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

| | |
|---|---|
| | Հալածողը հաճախ ավելի մեծ է կամ ավելի ուժեղ, քան այն անձնավորությունը, որին նա հալածում է: |
| | Բուլինգ նշանակում է ինչ-որ մեկին կրկին ու կրկին հալածել: |
| | Բուլինգը սարսափելի է ինչ-որ մեկի համար: |
| | Ես ասացի ուսուցչիս, որ չեմ ուզում հալածող լինել: Ես հարցրեցի նրան, թե ինչ պետք է անեմ դրա համար: |

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

| | |
|---|---|
| | Ուսուցիչս ասաց, որ ամենալավ բանը, որ ես կարող եմ անել, մարդկանց հետ վարվեմ այնպես, ինչպես ուզում եմ, որ նրանք ինձ հետ վարվեն: Եթե ես չեմ ցանկանում, որ ինչ-որ մեկը ինչ-որ բան անի կամ ասի ինձ, ապա ես էլ չպետք է դա անեմ կամ ասեմ: |
| | Պետք է մարդկանց նկատմամբ հարգալից լինել: Դա նշանակում է հավատալ, որ յուրաքանչյուր մարդ կարևոր և արժեքավոր է, և այդ կերպ վարվել նրանց հետ: |
| | Իսկ եթե մեկը կարևոր և արժեքավոր է, ես չեմ վնասի նրան, չեմ ասի ստորացուցիչ խոսքեր կամ չեմ վերցնի այն, ինչ իրենն է: |
| | Ես շատ կփորձեմ հալածող չլինել: |

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: